# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## 21 հունվարի 2022թ-ին կնքված N «ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-22/2-1» ծածկագրով՝ Պետության կարիքների համար համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի

ք.Երևան «27» հունվար 2022թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գարիկ Բոշյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տեխնոինժիներինգ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Անժելիկա Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետը, ինչպես նաև **«ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-22/2-1»** գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### *1. Համաձայնագրի առարկան*

1.1 Հաշվի առնելով, որ 2022 թվականի համար հատկացվել են համապատասխան ֆինանսական միջոցներ, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին հաստատել Պայմանագրի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն Տեխնիկական բնութագիր-Գնման ժամանակացույցի՝ հավելված 1-ի և Վճարման ժամանակացույցի՝ հավելված 2-ի:

### *2. Այլ պայմաններ*

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

### *3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| Վարչապետի աշխատակազմ | «Տեխնոինժիներինգ» ՍՊԸ |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ Կառավարական տուն 1 | Ք.Երևան, Եղբայրության 1-ին նրբ 14 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Արարատ բանկ ԲԲԸ |
| Հ/Հ 900011024099 | ՀՀ 1510052737280100 |
| ՀՎՀՀ 02505554 | ՀՎՀՀ 02290157 |
| ------------------------------------ / ստորագրություն / | ------------------------------------ / ստորագրություն / |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված թիվ 1*
*«21» հունվարի 2022թ. կնքված*
*ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-22/2-1 ծածկագրով պայմանագրի*
*« 27 » հունվար 2022թ. կնքված N 1 Համաձայնագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | Ընդհանուր առավելագույն գինը /ՀՀ դրամ | Ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը |
| 1 | 50311120/517 | Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ համաձայն Պայմանագրի հավելված 1.1 | դրամ | 270 800 | 1 | Ք.Երևան, Կոմիտաս 49/2 | Համաձայնագրին ուժի մեջ մտնելուց մինչև 2022թ դեկտեմբերի 25-ը: |

1. Ծառայությունների գները ներառում են դրա ընթացքում օգտագործվող բոլոր նյութերի ու պահեստամասերի գները: .
2. Պահեստամասերը պետք է տրամադրվեն Կատարողի կողմից և լինեն չօգտագործված:
3. Ծառայությունների մատուցման ժամանակ փոխարինված պահեստամասերի կամ այլ սարքավորումների համար երաշխիքային ժամկետը սահմանվում է՝ Ծառայությունն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 180 օրացուցային օրը:
4. Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով տրամադրել տեղեկանք՝ Պատվիրատուի սարքավորումը Կատարողի սպասարկման կետում գրանցելու օրվա և ժամի մասին:
5. Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի սարքը կամ սարքավորումը Կատարողի սպասարկման կետում գրանցվելու օրվանից 5 օրյա ժամկետում:
6. Պատվիրատուի պահանջով, հարկ եղած դեպքում, ծառայությունները պետք է մատուցվեն նաև տեղում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1 հասցեում):
7. Կատարողի մոտ պահեստամասի բացակայության պատճառով, ծառայության մատուցման ժամկետն ավելացնելու դեպքում, Պատվիրատուի համաձայնությամբ, կարող է սահմանվել ծառայության մատուցման այլ ժամկետ, անհրաժեշտության դեպքում Կատարողի կողմից Պատվիրատուին ժամանակավոր օգտագործման աշխատող այլ համանուն սարքեր, սարքավորումներ տրամադրելու պայմանով:
8. Եթե Պատվիրատուին հայտնի չէ սարքի կամ սարքավորման անսարքության պատճառը, ապա Կատարողը իրականացնում է դիագնոստիկա և եզրակացություն է տրամադրում Պատվիրատուին, որից հետո Պատվիրատուն, ելնելով նպատակահարմարությունից, իր հայեցողությամբ, դադարեցնում կամ հանձնարարում է կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված, իր կողմից մասնանշված ծառայության մատուցումը:
9. Ծառայությունները մատուցվում են Պատվիրատուի կողմից պահանջի ծագման դեպքում:
10. Պատվիրատուն վճարում է փաստացի մատուցված ծառայությունների դիմաց:

**Ծառայությունների միավոր գները հաշվարկված են սույն Պայմանագրի 4.2 կետով սահմանված բանաձևի համաձայն և ներկայացված են պայմանագրի հավելված N 1.1-ում:**

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024099
ՀՎՀՀ 02505554

/ ստորագրություն /
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«Տեխնոինժինիրինգ» ՍՊԸ
Ք.Երևան, Եղբայրության 1-ին նրբ 14
Արարատ բանկ ԲԲԸ
ՀՀ 1510052737280100
ՀՎՀՀ 02290157

/ ստորագրություն /
Կ.Տ

*Հավելված թիվ 2*
*«21» հունվարի 2022թ. կնքված*
*ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-22/2-1 ծածկագրով պայմանագրի*
*« 27 » հունվար 2022թ. կնքված N 1 Համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց առավելագույն վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդա-մենը |
| 1 | 50311120/517 | Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ | - | 27800 | 27800 | 94700 | 94700 | 94700 | 162400 | 162400 | 162400 | 270800 | 270800 | 270800 | 270800 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
** Վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայության դիմաց:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու**
Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հր.
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024099
ՀՎՀՀ 02505554

-----------------------------------------
/ ստորագրություն /
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«Տեխնոինժինիրինգ» ՍՊԸ
Ք.Երևան, Եղբայրության 1-ին նրբ 14
Արարատ բանկ ԲԲԸ
ՀՀ 1510052737280100
ՀՎՀՀ 02290157

-----------------------------------------
/ ստորագրություն /
Կ.Տ